ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
4	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ	սեղաններ	ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի հրամանով սահմանված պահանջներին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Մանկական սեղանը պատրաստված էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել

					մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Մետաղական հիմնակմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000 x 700 x 430 մմ (Ե x Lx Բ): Սեղանի աշխատանքային հարթության համար օգտագործվի լամինացված E0 դասի ՓՏՍ ՝ 18 մմ հաստությամբ: Լամինացված ՓՏՍ E0 դասի աշխատանքային հարթության եզրերը հղկված, մշակված և ողորկ, առանց ծլեպների, շրջափակվեն համապատասխան հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Բոլոր անկյունները կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800 x 600 x 381 մմ (Ե x L x Բ), որին՝ զոդման միջոցով ամրացվում են 20 x 20 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով: Ոտքերը խցանված պլաստիկե

				խցաններով՝ 6 մմ հաստությամբ: Վերոգրյալ չափսերը խիստ համամասնորեն համապատասխանեն համապատասխան տարիքային խմբի համար պատրաստվող աթոռների չափսերին՝ դրանց միաժամանակյա հարմարավետ շահագործման նպատակով, որից ելնելով թույլատրվում են նշված չափսերից որոշակի շեղումներ: Զոդման կարանները լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ ներկանյութով՝ առանց անհարթությունների, միատոն և համասեռ ներկանյութով:Նմուշները մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Սահմանվի երաշխիքային սպասարկում՝ 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա կատարվի մակնշում, որում նշված լինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով

				(մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով։ Մակնշումը կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում)։

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ГРОСС ГРУП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
4				